ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/75

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Վերին Արտաշատի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Ուսպեխ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ուսպեխ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցում, ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի «Լուսնթագ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ուսպեխ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 22.06.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

1. «Համախոհ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ որոշում,

2. 18.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով՝ «Համախոհ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 22.06.2020թ.-ին:

23.06.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/75 համարի ծածկագիրը և հրապարակվել www.gnumner.am կայքում:

30.06.2020թ.-ին, 10.07.2020թ.-ին և 16.07.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.07.2020թ.-ին:

2. «Ուսպեխ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ուսպեխ» ՍՊԸ-ն 22.06.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Վերին Արտաշատի համայնքապետարանի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի «Լուսնթագ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Համախոհ» ՍՊԸ-ն և «Ուսպեխ» ՍՊԸ-ն:

«Համախոհ» ՍՊԸ-ն և «Ուսպեխ» ՍՊԸ-ն մասնակցելով Ընթացակարգին ներկայացրել են հայտեր, որոնց գնային առաջարկները հետևյալն են.

Կազմակերպության անվանումը	*Ինքնարժեք*	*Շահույթ*	*ԱԱՀ*	*Ընդհանուր գին*	*Նախահաշվային արժեք*
«Ուսպեխ» ՍՊԸ	*7 600 000*	*5 000 000*	*0*	*12 600 000*	*12 815 394*
«Համախոհ» ՍՊԸ	*8 047 260*	*402 360*	*0*	*8 449 620*	*12 815 394*

Ընթացակարգի 15.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության.

4-րդ կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից:

5-րդ կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընթացակարգի 18.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակից ճանաչել «Համախոհ» ՍՊԸ-ին և 2-րդ տեղը զբաղեցնող մասնակից ճանաչել «Ուսպեխ» ՍՊԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Ուսպեխ» ՍՊԸ-ն զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից, իսկ Ընթացակարգի շրջանակներում խախտվել են մրցակցության և իրավահավասարության սկզբունքները:

Մասնավորապես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նար Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին»:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրված է հետևյալ խմբագրությամբ՝

«Հրավերով նախատեսվում է նաև, որ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի

ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Ընթացակարգի հրավերի՝

4.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

7.2 կետի (ա) ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե՝ մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Վերոգրյալից հետևում է, որ գնման ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը ներկայացնում է հայտ, որը անհրաժեշտ է կազմել և ներկայացնել գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգին համաձայն: Հայտը գնահատվում է բավարար, եթե այն համապատասխանում է գնման ընթացակարգի հրավերի

պահանջներին, հակառակ հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք ցանկանում հրավիրել այն փաստի վրա, որ «Համախոհ» ՍՊԸ-ն, Վերին Արտաշատի համայնքապետարանի կողմից հայտարարված «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս, գնահատող հանձնաժողովին հայտի ապահովում չի ներկայացրել:

Այսպիսով, գնումների մասի օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն՝ մասնակիցը հայտի ապահովում ներկայացնում է հրավերով սահմանված պահանջի դեպքում, այն է՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: (ՏԵՍ՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 21.05.2020թ. ընդունած ԳԲՔԱ-Լ0-2020/55 որոշման մեջ):

Որպես բացառություն Կարգով սահմանվել են դեպքեր, երբ հայտի ապահովում չի ներկայացվում, դրանք են այն դեպքերը, երբ գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ինչպես նաև՝ գնման ընբթացակարգը չափաբաժիններով կազմակերպելու դեպքում, երբ գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը (10 մլն. ՀՀ դրամը):

Տվյալ պարագայում, Ընթացակարգի շրջանակում ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի «Լուսնթագ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նախահաշվային գինը գերազանցել է գնումների բազային միավորի տասնապատիկը, այն է՝ 12 815 394 ՀՀ դրամ, ուստի Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետովսահմանված բացառությունը (այն է՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում) սույն դեպքում կիրառելի չէ, ուստի «Համախոհ» ՍՊԸ-ի կողմից հայտով պետք է ներկայացվեր հայտի ապահովում՝ հրավերով սահմանված բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Այսպիսով, նման պայմաններում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով «Համախոհ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, չի կարող համարվել օրինական, ավելին, նման որոշում կայացնելով Ընթացկարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Հրավերի 8.2 կետով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

«Ուսպեխ» ՍՊԸ-ն 03.07.2020թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

«Ուսպեխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/75 բողոքի շրջանակներում բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին խնդրել էինք՝

1. Պարտավորեցնել «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Համախոհ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում 18.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3

արձանագրության 2-րդ կետով «Համախոհ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Բողոքի քննության ընթացքում պատվիրատուի կողմից տրված պարզաբանման արդյունքում պարզ դարձավ, որ «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողով կողմից www.gnumner.am կայքում հրապարակվել է բովանդակային առումով էականորեն տարբերվող ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման երկու տարբեր հրավերների տեքստեր՝

- *1-ին հրապարակման համաձայն՝ նշված հրավերը եղել է պայմանով մրցույթի հրավեր՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսվելու: Նշված հրավերով հայտի ապահովում չի պահանջվել:*
- *2-րդ հրապարակման համաձայն, որը հետևել է առաջին հրավերը հրապարակելուն, հրապարակվել է նույն «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման նոր հրավեր, որով նշված չի եղել, որ այն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսվելը: Ավելին, վերոհիշյալ հրավերով պահանջվել է ներկայացնել հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:*

«Ուսպեխ» ՍՊԸ-ն ծանոթանալով «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման վերջին հրավերի տեքստին՝ ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով տրամադրված հայտի ապահովում: Ընդ որում, ՍՊԸ-ն գնի մեջ ստիպված է եղել նաև հաշվարկել բանկային երաշխիքի ձեռքբերման և սպասարկման համար կատարված և կատարվելիք ծախսերը:

Մինչդեռ ընթացակարգի մյուս մասնակիցը՝ «Համախոհ» ՍՊԸ-ն, ըստ երևույթի հիմք ընդունելով ընթացակարգի հրապարակված առաջին հրավերը, նման հայտի ապահովում չի ներկայացրել, ինչը ակնհայտ անհավասար պայմանների մեջ է դրել երկու մասնակիցներին:

Արդյունքում www.gnumner.am կայքում «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման երկու տարբեր հրավերների հրապարակումը /առանց շտկման մասին որևէ դրույթ նշելու/ հանգեցրել է Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտմանը:

Ելնելով վերոգրյալից՝ «Ուսպեխ» ՍՊԸ-ն գտնում է, որ ընկերության խախտված իրավունքը հնարավոր է վերականագնել կամ «Ուսպեխ» ՍՊԸ-ի հայտը մերժելու, կամ «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չեղյալ հայտարարելու եղանակով:»:

Ելնելով վերոգրյալից, «Ուսպեխ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

1. «Համախոհ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ որոշում,

2. 18.06.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով՝ «Համախոհ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ որոշում,

կամ

3. «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշում:

«Ուսպեխ» ՍՊԸ-ն 12.07.2020թ.-ին ներկայացրած լրացուցիչ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ մեր դիրքորոշումը ԱՄՎԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բողոքի Վերին Արտաշատ համայնքապետարանի դիրքորոշման կապակցությամբ:

ԱՄՎԱՀ-ԳՀԱՇՁԲ-20/01 ծածկագրով գնանշման հարցման հրավեր gnumner.am կայքում հրապարակված է 2 հատ, Պատվիրատուի պնդմամբ հրավերը հայտարարված է «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 15-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ (տես 1-ին հրապարակված հրավեր): Այդ պարագայում հարց է առաջանում թե ինչու է ճիշտ հրավերը հրապարակվելուց հետո, հրապարակվում նաև 2-րդ հրավերը, որը որ ըստ պատվիրատուի սխալ է: Միակ տրամաբանական պատասխանն այն է, որ սխալ հրավերը հրապարակվել է մասնակիցներին շեղելու նպատակով առաջացնելով մրցակցային անհավասար պայմաններ:

Պատվիրատուի պնդմամբ ճիշտ համարվող հրավերում որը հայտարարված է «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 15-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 6-ՐԴ ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ կրկին պահանջվում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի տեսքով, այսինքն նույնիսկ այս պարագայում հրավերը կազմված է այնպես որպեսզի ապակողմնորոշի մասնակիցներին կրկին ստեղծելով մրցակցային անհավասար պայմաններ (օրինակ եթե Ուսպեխ ՍՊԸ-ն չներկայացներ հայտի ապահովում այս անգամ պատվիրատուն կարող էր ասել որ հրավերով պահանջված էր և Ուսպեխ ՍՊԸ-ն պարտավոր էր ներկայացնել:)

Այսինքն ելնելով վերոգրյալից պարզ է դառնում, որ երկու հրավերներով էլ պահանջված էր հայտի ապահովում և Համախոհ ՍՊԸ-ն պարտավոր էր ներկայացնել ինչը չի արել:

Կից ներկայացնում եմ gnumner.am կայքում հրապարակված 1-ին հրավերը որին հղում է անում պատվիրատուն, որտեղ ևս պահանջվում է հայտի ապահովում կանխիկ փողի և բանկային երաշխիքի տեսքով:»:

3. <u>Վերին Արտաշատի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 22.06.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/9363-2020 գրությամբ դիմել է Վերին Արտաշատի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ուսպեխ» ՍՊԸ-ի կողմից 22.06.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 24.06.2020թ.-ին թիվ 112 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 23 հունիս 2020 թվականի գրության՝ հայտնում ենք Ձեզ մեր դիրքորոշումը ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բողոքի մասնակցի դիրքորոշման կապակցությամբ:

Արարատի մարզի Վերին Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար սույն թվականի հունիսի 08-ին ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01 ծածկագրով հրապարակվել է գնանշման հարցման ընթացակարգ և հայտերի վերջնաժամկետ է սահմանվել սույն թվականի հունիսի 15-ը ժամը 10:30-ը ներառյալ:

Խնդրում եմ Ձեր ուշադրությունը այն փաստին, որ նույն ընթացակարգի հայտարարությունը հրապարակվել է երկու անգամ՝ խնդրում եմ հիմք ընդունել ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ 20/01 ծածկագրով ընթացակարգի հայտարարության առաջին հրապարակումը:

Հրավերի և հայտարարության տեքստի առաջին էջում հստակ նշված է, որ գնման ընթացակարգը իրականացվում է Հայաստանի Հանրապետության Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, որը իրենից ենթադրում է, որ գնման ընթացակարգի

համար նախատեսված չեն ֆինանսական միջոցներ: Հրավերով պայմանագրի նախագծի հավելված թիվ 2 ով սահմանված է, որ աշխատանքների սկիզբ է համարվում համաձայնագիրը /այսինքն ֆինանսական միջոցների հատկացումը/ ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 120 օր:

Հրավերով պայմանագրի նախագծի հավելված թիվ 3 ով անգամ սահմանված չէ վճարումների ժամանակացույց:

Ելնելով վերոգրյալից՝ հրավերից պարզ է դառնում, որ պատվիրատուն նախաձեռնել է գնման ընթացակարգ առանց առկա ֆինանսական միջոցների, ուստի չի պահանջվում հայտի ապահովում:

Քանի որ հրավերով սահմանված է հայտի ապահովման պահանջ և հակառակը, այսինքն հրավերով և պահանջվել է և չի պահանջվել հայտի ապահովում, ապա մասնակիցը կարող էր քողոքարկել մինչև հայտերի բացման նիստը կամ գնահատող հանձնաժողովին ներկայացներ պարզաբանման պահանջ:

Իսկ գնահատող հանձնաժողովը հայտերը գնահատելիս առաջնորդվել է այն փաստով, որ հրավերը և գնման ընթացակարգը իրականացվել է Հայաստանի Հանրապետության Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն:»:

Պատվիրատուն 07.07.2020թ.-ին ներկայացրած լրացուցիչ դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ մեր դիրքորոշումը ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բողոքի մասնակցի դիրքորոշման կապակցությամբ:

ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստում պարզաբանվել է, որ և «Ուսպեխ» ՍՊԸ-ն և «Համախոհ» ՍՊԸ-ն ծանոթացել են gnumner.am կայքում հրապարակված միայն առաջին հրավերին, ուստեղ հստակ նշված է, որ գնման ընթացակարգը իրականացվում է Հայաստանի Հանրապետության Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա: Մասնակիցների ներկայացրած հայտերում ներառված փաստաթղթերը կազմված են առաջին հրավերին կցված հավելվածների համաձայն: Մասնավորապես գնային առաջարկը (Հավելված 2) «Համախոհ» ՍՊԸ-ի և «Ուսպեխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված է առաջին հրավերով սահմանված կարգով:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Վերին Արտաշատի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի «Լուսնթագ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.06.2020թ.-ին ժամը 11:16-ին հայտարարվել է «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ 1-ին ընթացակարգ):

ii. Պատվիրատուի կողմից ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի «Լուսնթագ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.06.2020թ.-ին ժամը 11:56-ին հայտարարվել է «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ 2-րդ ընթացակարգ):

iii. 1-ին ընթացակարգը և 2-րդ ընթացակարգը հաստատվել են գնահատող հանձնաժողովի 03.06.2020թ. թիվ 1 որոշմամբ: Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 15.06.2020թ.-ին ժամը 10:30-ին:

iv. 1-ին ընթացակարգի և 2-րդ ընթացակարգի հրավերներով հաստատվել է թիվ 2 հավելվածը՝ գնային առաջարկի օրինակելի ձևը:

v. 1-ին ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը թիվ 2 հավելվածը հաստատել է հետևյալ ձևով.

Հավելված 2
ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01**ծածկագրով**
գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				

vi. 2-րդ ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը թիվ 2 հավելվածը հաստատել է հետևյալ ձևով.

Հավելված 2

ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01**ծածկագրով**
գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			

vii. ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի հունիսի 2-ի թիվ 154-Ա հրամանով (այսուհետ նաև՝ Հրաման) հաստատվել են թղթային ձևով կազմակերպվող գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում օգտագործվող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը:

Հրամանով հաստատվել է գնային առաջարկի հետևյալ օրինակելի ձևը.

Հավելված 2
«---ԱՇՁԲ---/---»* ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «---ԱՇՁԲ---/---»* ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			

viii. Պատվիրատուն 24.06.2020թ.-ին թիվ 112 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ 2020թ.-ի հունիսի 08-ին «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով ընթացակարգի հայտարարությունը հրապարակվել է երկու անգամ: Պատվիրատուն միաժամանակ խնդրել է հիմք ընդունել «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով ընթացակարգի հայտարարության առաջին հրապարակումը:

ix. 1-ին ընթացակարգում առկա է, 2-րդ ընթացակարգում՝ ոչ, որպես վերնագիր նշված «սույն հրավերը հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն» վերտառությունը:

x. «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած երկու մասնակիցները գնային առաջարկները ներկայացրել են ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ուսպեխ» ՍՊԸ-ի կողմից 22.06.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ՝ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 14-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է գնումների կամ նախաորակավորման հայտարարության և հրավերի տեքստերը՝ բացառությամբ փակ պարբերական մրցույթի նախաորակավորման հայտարարության:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը…:

Կարգի 31-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝ հրավերի տեքստը:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերին Արտաշատի համայնքապետարանի կողմից ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի «Լուսնթագ» մանկապարտեզ

ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.06.2020թ.-ին ժամը 11:16-ին հայտարարված «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկի օրինակելի ձևում սահմանվել է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Պատվիրատուի կողմից ՀՀ Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի «Լուսնթագ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.06.2020թ.-ին ժամը 11:56-ին հայտարարված «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկի օրիակելի ձևում սահմանվել է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի հունիսի 2-ի թիվ 154-Ա հրամանով հաստատված թղթային ձևով կազմակերպվող գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում օգտագործվող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Պատվիրատուն 24.06.2020թ.-ին թիվ 112 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ Բողոքներ քննող անձին հայտնել է, որ 2020թ.-ի հունիսի 08-ին «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով ընթացակարգի հայտարարությունը հրապարակվել է երկու անգամ՝ խնդրելով հիմք ընդունել «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով ընթացակարգի հայտարարության առաջին հրապարակումը, որի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 2 հավելվածով սահմանված գնային առաջարկի օրինակելի ձևը պետք է համապատասխանի Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով և ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի հունիսի 2-ի թիվ 154-Ա հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևով սահմանված պահանջներին:

Տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից 1-ին ընթացակարգի հրավերով սահմանված գնային առաջարկի օրինակելի ձևը հակասում է Կարգով և Հրամանով հաստատված

հրավերի օրինակելի ձևով սահմանված հրավերի պայմաններին, իսկ 2-րդ ընթացակարգի հրավերով սահմանված գնային առաջարկի օրինակելի ձևը համապատասխանում է Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով և ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի հունիսի 2-ի թիվ 154-Ա հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևով սահմանված պահանջներին:

Ամփոփելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ գնման գործընթացի շրջանակներում կոնկրետ կարիքի բավարարման նպատակով միաժամանակ մեկից ավելի՝ իրար հակասող գնման ընթացակարգ հայտարարելը, 1-ին ընթացակարգում առկա, 2-րդ ընթացակարգում՝ ոչ, որպես վերնագիր նշված «սույն հրավերը հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն» վերտառությունը, և 1-ին ընթացակարգի հրավերով սահմանված գնային առաջարկի օրինակելի ձևի՝ Կարգի և Հրամանով հաստատված հրավերի օրինակելի ձևով սահմանված հրավերի պայմաններին չհամատասխանելը, ուղարկիորեն հանգեցնում է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված հիմնարար դրույթների խախտմանը, ինչով պայմանավորված խախտվում է մասնակիցների՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ուսպեխ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ վերականգնելով Ընկերության գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, որի արդյունքում կապահովվի Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածների դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը, ուստի, նման պայմաններում, գնման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ուսպեխ» ՍՊԸ-ի կողմից 22.06.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/75 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԱՄՎԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ